

տեսնելով. մտածել մէջմ'որ Տրդատայ շրինայե-
ցին մահադեղ խմցընելով, իսկ Տիրան հայրդ
թագին հետ իւր աչքն ալ կորոյս, վասն զի
զիրենք ջրատածեց. գուցե՞ր մը... կը խիթամ...
ըսելու...

ԱՐՇԱԿ

Ա՛հ, ինչքն կ'ըսես, ի՜նչ յիշատակարաններ
առջնս կը բանաս:

ՍՄԱՍ

Տէր արքայ, հեռացո՛ր քովէդ սա չարախոր-
հուրդ թշուառականները, որոնք և հեռաւոր թըշ-
նամիներէդ աւելի վնասակար և աւաւոր են:
Ինչու կակած մը միտքիդ մէջ չ'արթննայ,
սըւոնց չարախտութենէն. պայծառ երեսիդ վրայ
երբէք սխրութեան մապլը չըբազմի: Կենացդ
մէջ ամենափառաւոր գործդ՝ այսօր կատարածդ
պիտի սեպուի, թոռանցդ հետեւելու արծանի և
անմահ յիշատակ մը կը թողուս: Ի՛նչ լսեցի,
տէր Աստուած, թագաւորիս իւր նախարարաց
հետ հաշտուիլն վատութիւն կը համարուի. միթէ՞
միոյ զլիտյ անդամքն չ'են իրենք ալ. ինչպիսի՞
ամբարիշտ խորհուրդք կը արուին սուրբ Հայ-
րապետին: Թագաւորն հայր է հայրենեաց և
պաշտպան ժողովրդոց, բռնաւոր մը կրնայ եր-
կիրգալի ըլլալ ազգին, այլ երբէք սիրելի: Տե-
սէ՛ք՝ յիշատակարանաց մէջ՝ ճիւթ թագաւորք աւելի
գովեստի արծանի եղած են, որոնց մահն անմիթ-
թարելի սուգ եղած է ժողովրդեան: Տէ՛ր իմ,
սանձ մը դիր սա ստամբակ լեզուներուն, որոնք
ամենազերպանց առաքելութիւնն ալ կը չարա-
խոսեն, որոնց արհեստն չղոցորթութիւնն է,
սիրուջն աչքը իւր կորստեան վրայ գոցել կ'աշ-
խատին. առաքելին խայթող փուշ մ'է իրենց
աչքին. նախանձն ամէն բանի զիրենք կը
յանդգնեցընէ:

ՎԱՐՊԵՆ

Հայոց սպարապետին ունեցած ակնածութիւնս
զիս լռելու կը բռնադատէ. թագաւորն հաւա-
տարմութեանս փորձը շատ անգամ առած է. իւր
վեհափառութիւնը նախատողաց դէմ ցատումս
կարող չ'եմ սանձելու:

ՍՄԱՍ

Ես ալ սրտմտութիւնս չ'եմ կրնար չափաւո-
րել, երբ թագաւորիս աշպարհի չար խորհուրդք
կը թելադրէք:

ԱՐՇԱԿ

Սպարապետդ Հայոց, ես իմ պարտքս և պա-
տիւ կը ճանչնամ ու ըստ այնմ պիտի շարժիմ.
դու այժմ քնս աչքէ անցուր բռնակը, որպէս
զի քատարտս գտնուի Պարսից դէմ կուռելու:
(Միտառս երկրպագելէն վերջը կ'իջայ)

(Շարունակելի) ԾԵՊՈՂՆ ՄՐԵԱՍԵԱՆ

Ս. ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՅԻՈՑ

Ն Կ Ա Ր Ա Գ Ի Ր Ը

Խոր է այն: Ծովու մը նման որ կարծես
անյատակ է. մտիբ իր սրտին մէջ, կը լսես
աղբերարուիս ձայներ և հեծեծանքներ,
« Զայն հառաչանաց հեծութեանս սրտի
ողոցոց աղաղակի »: բոլոր մարդկութեան
թշուառութիւնները հոն բոյն դրած են,
խոր բոյն, կամ կարծեք են դինել. և այդ
հոգւով վիրաւից մարդը՝ բնութեան առանձ-
նութեան մէջ ապրելով, բնութեան ամէն
մէկ էակ իրեն նիւթ կ'առնէ, անով բա-
ցատրելու համար իր զգացածը, իր խոր-
հածը:

Սքանչելի Հայրս, անմեղութեան անու-
շահոտ շուշան մ'է, այն է՛ն անմեղներէն
որոնք հրեշտակները կ'ամաչցընեն և կը
համարին իրենց անձը աշխարհիս ամենէն
մեղաւորը:

Սակայն իր ողբերը, իր լացը կեղծիք
չեն. նա երբ իր երջանիկ զուրկը կար-
կառած մազաղաթի կտորի մը վրայ՝ կը
դրոշմէ իր օրօրին ողբերը, անոնք արդէն
Աստուծոյ առջև արցունքով զրուած են,
իւր սրտի տաց բովէն անցնելով. « Ելցէ
ի խորոց աստի զգալութեանց խորհրդակիր
սենեկիս... (առ քեզ կամաւորական) ». դար-
ձեալ Աստուծոյ հետ խօսած էր անոնց
վրայօք. « անոր համար իբր ամենուն կնիք
կը դնէ »: Ի խորոց սրտից խօսք ընդ Աս-
տուծոյ »: այնքան ընտանեբար՝ ինչպէս
հայր և որդի. այնքան մտերիմ, շուշան
շնչին, դունչը դնչին, զԱստուծո միշտ իր
առջևն ունէր իրեն գմայլող:

Զէր նա մենաւոր մը՝ նստած, փակուած
միշտ երկիրդին մէջ, այլ իւր դարուն հոգին
էր, ամենուն ծանօթ, զամէնքը ճանչցող.
անդրադարձող, դիտող, զննող է իր միտքը,
ամէն բանի խորը կը մտնէ, ամէն բան
իւր գրչին տակ անցուցիւր է և չէ վրիպած:

Սքանչելապէս կը ճանչնայ մարդկան
թշուառութիւնները, անոնց նկարագիրը
երկու խօքով կամ բարդութեամբ մը

այսօրուան զրքոյի մը ըսածը կ'ըսէ՝ Անոնց ղեզերը՝ բնական է՝ հոգևոր բաւասանն է, որ կը լեցնէ մարդուս ամենէն անտանելի վշտերուն վրայ. իսկ բարոյական վշտերու նկատմամբ, իր մարգասկը բնաւորութեամբ և անոյշ սրտովը կը խառնէ իր աղօթից մաքուր ձայնը՝ մեղաւորաց և ցաւազարաց շնչոյն հետ՝ որպէս զի լսուի, « Շնորհեսցէ Տէր... նոցա իմովս ձայնին շունչս բարեհամբոյրս », որպէս զի իրենց ցաւերէն ազատին, խաղաղի սրտերնին և ապա « Եղիցի բղիտոյն արտասուաց սովաւ վարժելոց »: արցունքներ՝ որ կը դիւրացնեն առ Աստուած դարձը:

Կրօնքի և թշուառութեան ողբի և յուսոյ երջանիկ զուգութիւն մը կը տեսնուի Նարեկացւոյն մէջ: Հոգեզմայլ զրչիս մէջ միայն խիստ և տխուր զոյնբը շենք ուզեր տեսնել, ինչպէս զրեթէ իր ողբերը կը ցուցնեն, Հերոնիմոս մը որ միայն սե քարերով կուրծքը կը բաղխէ սև ժայռերուն մէջ. այս՝ նա հսկող էր, պահեցող, ինչպէս որ Հի ողբին մէջ կ'ըսէ. « Հսկող յորջորջեցայ, արթուն կոչեցայ »: Իր սրտին մէջէն ցուացնելով, մութ սրբագան տաճարի սեմերուն մէջ, Երկնաւորին առջև իր արցունքներու կանթեղով ոգևորուած և իր սրտի բոցով պլպլացող մշտավառ լապտերը:

Հայաստանի զուարթ և ծիծաղկոտ բնութիւնը այդ չէր յորդորեր. նա որչափ որ հսկող էր, որչափ որ իր խցիկն ու եկեղեցին էր իր կենաց վայրը, բայց բանաստեղծ էր, զգացող էր, նուրբ և ազնիւ սիրտ մ'ունէր, և ինքն ալ Աստիզացւոյն նման շատ անգամ բազկաւարած կանչեր է զբնութիւնը, երկինք ու երկիր, ծաղիկներն ու վանայ Մովակիս ալիքները՝ իրեն հետ մրնջելով աղօթելու. սիրեր է բնութիւնը անոր պարզելով մնլամաղձ զուարթ թին հետ. մարգարտեայ արցունքը վարդի թերթիկ վրայ կաթեցնելով, իր տաքուկ շունչը պաղ պաղ հովին տալով՝ բոլորովին նոր ոգով զրաւիչ և զուարթերես Նարեկայ սոխակը կը տեսնենք: Եւ յիբրակ, յետ ամէն ողբերգակ քնարի կը լսենք նաեւ

երանութեան յուսոյ և քաղցրութեան ցոյ մը իր հոգին զովացնող:

Ինչպէս անաւոր ալիքներէն բռնուած նաւորը մը յետ երկար տատանմանց սև սև փոթորիկներու տեսքէն և ալիքներէն զարհուրած, մինչև երկինք կ'ելլէ և անդունդ կ'իջնէ, ապա կը թափէ իւղի պարզ փորը լոցնելով անոնց փոթորկուող սաւ մը, այսպէս ալ Նարեկացին փոթորկի պատարաստութեամբ կը սկսի ամէն տեսակ բացատրութեամբ և բարդութեամբ իր խռովեալ երեցած ներքին ծովը նկարագրել, ուրիլ, յարաճուն պարզել ամէն գոյնով իր զթած Երկնաւորին առջև իր մէջ զգացած զառն վշտերը, իր կուրծքէն դուրս տալ սևազոյն բառեր, այնպէս որ ընթերցողը կը հեայ, կը քրտնի մինչև ծայրը հասնի. և ապա հանդարտութիւն, անուշութիւն, երկնային երջանկութիւն, պարզ երկնքի տակ, խաղաղ ալիաց վրայ, սրտի նաւը կը յառաջէ երգելով « Յոյս իմ ես դու Տէր »:

Եղ. Ս. 8.

Ա Տ Ա Ն Է Կ Ր Ի

Ա Ն Մ Ա Հ

Կ'ուզեմ, կ'ուզեմ ապրիլ ես, և ըլլալ միշտ քսան [տարու, Գրքուիլ ամէն միջոցի թռիչքովս ամէն թեւերու, Ժլպախի, հըրճուիլ ու սիրել. Կ'ուզեմ շողով գինովցնել առոյգ հասարկ չքքնաղ, Ժիր ու թեթեւ ինչպէս թեւ, թարմ ինչպէս ծիղը [խտի, Ականակիտ ինչպէս ծով...]

Ես կ'անարգեմ քեզ, ո՞վ Մահ: — կը սիրեմ բոցն [ու կոհակն, Երկիրն առողջ կը սիրեմ բեղնաւորուողն համ [բոյրով կախարդասար Արեւուն. Տխտանական հընոցն ուր հըսկայ մուրեմբ հաս [տարետ Կ'ելլեն կ'իջնեն անդադար ստրակներէ անհամար Դիւցազնական շառաչով: